

Newsletter

Delegation of the European Union to Armenia

October 2011 #5(10)

Focus On/խոչոր պլան

Supporting Women's Rights

To promote women's roles in poor communities across the South Caucasus and to ensure their engagement in society, the EU is supporting a project on women's role in peacebuilding in the region. The "Strengthening Women's Capacity for Peacebuilding in the South Caucasus" project is implemented by Care International and started activities in March 2010.

The project's main objective is to support local civil society organisations to create an environment where marginalised women are able to protect their rights and take an active part in decision-making processes. So far efforts were undertaken in five areas of the South Caucasus including Armenia, Georgia, Azerbaijan, Abkhazia and Nagorno-Karabakh. Seminars, training sessions and other activities have been organised in 20 target communities. Project manager Anthony Foreman emphasised the importance of cooperation with local authorities, but noted that, unfortunately, in some communities tension between the authorities and civil society exists and may lead to uncertainty in project activities. A joint training targeting further fostering of cooperation between local governments and civil society will be organised in Yerevan to address such issues.

In Armenia a series of events has already taken place in villages and regional centres. On 25 September, the Sisian municipality together with a women's issues group initiative hosted an exhibition of handicrafts in the newly-reconstructed town square. The women involved said that the project had given them opportunities to demonstrate their abilities and protect their interests. The women's issues group, headed by Gayane Simonyan, gives juridical and psychological consultations, organises exhibitions and raises rights awareness among women.

The budget for this three-year project amounts to €1,319,988. It is funded by the European Union and Austrian Development Cooperation. CARE International implements the project in Armenia in cooperation with the Armenian Committee of the Helsinki Citizen's Assembly.



Հանուն կանանց իրավունքների

Հարավային Կովկասի աղքատ սոցիալապես անապահով համայնքներում կանանց դերը բարձրացնելու և հասարակության մեջ նրանց ներգրավվածությունն ապահովելու նպատակով ԵՄ-ն աջակցում է տարածաշրջանում խաղաղության ամրապնդման գործում կանանց դերը խթանող ծրագրին: «Հարավային Կովկասում խաղաղության ամրապնդման համար կանանց հնարավորությունների հզորացում» ծրագիրն իրականացվում է ԽՆԱՄԲ միջազգային (CARE International) կազմակերպության կողմից և սկսվել է 2010թ. մարտին:

Ծրագրի հիմնական գործառնությունն է աջակցել տեղական ԴԿ-ներին՝ ստեղծելու այնպիսի միջավայր, որտեղ սոցիալապես անապահով կանայք կարողանան պաշտպանել իրենց իրավունքները և ակտիվորեն մասնակցել որոշումների կայացման գործընթացներին:


Առայժմ աշխատանքներ են տարվել Հարավային Կովկասի 5 երկրներում՝ Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Աբխազիայում և Լեռնային Ղարաբաղում:

Հակամարտությունների թիրախ դարձած թվով 20 գոտիներում կազմակերպվում են սեմինարներ, դասընթացներ ու կանանց ակտիվությունը խթանող միջոցառումներ: Միջազգային խնամք Care International-ի ղեկավար Էնթոնի Ֆորմանը կարևորում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությունը, բայց և նշում, որ ցավոք, որոշ շրջաններում ղեկավարության և հասարակության միջև լարվածություն է նկատվում և դա կարող է անվստահություն առաջացնել ծրագրի գործունեության նկատմամբ: Այս խնդիրը որոշակիորեն հարթելու նպատակով առաջիկայում երևանում կկազմակերպվեն տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ աշխատելու կարողությունը խթանող վերապատրաստումներ:

Հայաստանում արդեն միջոցառումներ են իրականացվել մի շարք գյուղերում ու մարզկենտրոններում: Սեպտեմբերի 25-ին Սիսիանի քաղաքապետարանի աջակցությամբ և կանանց հիմախնդիրներով զբաղվող խմբի նախաձեռնությամբ քաղաքի բարենորոգված հրապարակում անց է կացվել կանանց ձեռքի աշխատանքների ցուցահանդես-վաճառք: Ծրագրում ներգրավված կանայք նշել են, որ ծրագիրը հնարավորություն է տալիս ցուցադրելու իրենց ունակությունները, և պաշտպանելու իրենց շահերը: Գայանե Սիմոնյանի գլխավորությամբ կանանց հիմախնդիրներով զբաղվող խումբը իրականաց-

նում է իրավաբանական, հոգեբանական խորհրդատվություններ, կազմակերպում ցուցահանդեսներ, ծանոթացնում կանանց՝ իրենց իրավունքներին:

Երեք տարի տևողությամբ ծրագրի ընդհանուր բյուջեն 1 319 988 եվրո է: Այն իրականացվում է ԵՄ-ի և Ավստրիայի գարգացման գործակալության աջակցությամբ: Միջազգային խնամքը (Care International) իր ծրագիրը Հայաստանում իրականացնում է համագործակցելով Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հետ:



Հաղորդագիր

Եվրոպական միության պատվիրակությունը Հայաստանում

Հոկտեմբեր 2011 #5(10)

Border Security

On 16 September a workshop dedicated to the modernisation of the Armenian-Georgian border crossing points of Bagratashen, Bavra and Gogavan took place.

A draft project on border security was developed by an independent international company within the framework of the EU funded and UNDP implemented "Supporting integrated border management systems in the South Caucasus" regional project, and was presented to the National Security Council of Armenia on 23 August 2011.

The project targets the reconstruction, redesign of content and technical hardware upgrades of crossing points to make them consistent with EU requirements. Proper implementation of the project would solve various issues of crossing points such as the reduction of corruption risks, the fight against smuggling and the faster cross-border movement of people and goods. The reconstruction of crossing points would strengthen overall border security.

The Head of the EU Delegation to Armenia, Raul de Luzenberger, UNDP Resident Representative, Dafina Gercheva, and the Secretary of the Armenian National Security Council, Artur Baghdasaryan, participated in the workshop.

For the reconstruction of Bavra the EU has already allocated €2.1 million. Construction work should start in early 2012 and be completed within two years.



Սահմանային անվտանգություն

Սեպտեմբերի 16-ին Երևանում մեկնարկել է հայ-վրացական սահմանային Բագրատաշենի, Բավրայի և Գոգավանի անցակետերի արդիականացման ծրագրին նվիրված աշխատաժողովը:

Սահմանային անվտանգության ծրագրի նախագիծը մշակվել է անկախ միջազգային ընկերության կողմից՝ ԵՄ կողմից ֆինանսավորվող և ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող «Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարում» ծրագրի շրջանակներում, և ներկայացվել է ՀՀ ազգային անվտանգության խորհրդին 2011թ. օգոստոսի 23-ին:

Այն նախատեսում է անցակետերի վերակառուցում, մատուցվող ծառայությունների վերաձևում, և տեխնիկական վերազինում՝ ԵՄ նախապահ համակարգի պահանջներին համահունչ: Ակնկալվում է, որ ծրագրի իրականացումը կնպաստի սահմանային գոտում առկա մի շարք այնպիսի խնդիրների վերացմանը, ինչպիսիք են՝ կոռուպցիոն ռիսկերը, մաքսանենգությունը, մարդկանց և բեռների դանդաղ տեղաշարժը: Անցակետերի վերակառուցումը կապահովի սահմանային անվտանգությունը:

Աշխատաժողովին մասնակցում էին Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Ռաուլ դե Լուզենբերգերը, ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակի մշտական ներկայացուցիչ Ռաֆինա Գերչևան և ՀՀ ազգային անվտանգության քարտուղար Ա. Բաղդասարյանը:

Բավրայի անցակետի վերակառուցման համար ԵՄ-ն արդեն իսկ հատկացրել է 2.1 մլն եվրո: Շինարարական աշխատանքները կսկսվեն 2012թ. սկզբին: Շինարարությունը նախատեսվում է ավարտել 2 տարում:

Human Rights and Democracy education



The Regional Master's Programme in Human Rights and Democratisation, a two-year interdisciplinary programme established with the financial support of the European Instrument for Democracy and Human Rights (EIDHR), officially started on 14 September at Yerevan State University (YSU).

12 of the 22 programme students are from Armenia and the other 11 are from Moldova, Ukraine, Belarus, Russia and Georgia. The

Head of the Centre for European Studies, Artur Ghazinyan, said that this would not be the final limit for cooperation and that other countries would be cooperating in the near future, including Azerbaijan and Turkey.

Within the scope of the programme, YSU cooperates with partner universities: Taras Shevchenko National University of Kiev, Belarus State University and the Moldovan University of European Political and Economic Studies.

The application of an interdisciplinary approach will provide students with a solid understanding of the cultural, historical, philosophical, political, legal, sociological and economic aspects of human rights and democratisation.

One of the unique aspects of this two-year Masters programme is the possibility for educational and cultural exchanges. The classes of the first two terms will be held in Armenia, whereupon the students will optionally continue their studies in one of the partner universities.

The students, who qualified for the course through a process of written and oral examinations, are full of expectations.

"For me, first of all, it's an intercultural exchange and I expect to acquire a deep specialisation", said Hasmik Harutyunyan, one of the students.

For Ukrainian student Anastasia Mikhaylova, participation in the programme is a huge responsibility: "We hope to go back to our countries and make a difference, create something new and something important."

Course leader Syune Harutyunyan emphasised in her speech the importance of specialising both in human rights and democratisation in Armenia. According to Harutyunyan, a very pleasant and binding atmosphere exists between students and professors.

Proper implementation of this programme will also promote European integration. The Head of the EU Delegation to Armenia, Raul de Luzenberger stressed that the EU has always been a supporter of human rights, and the new Master's programme is another step in this area.

The "Regional Master's Programme in Human Rights and Democratisation in Armenia, Belarus, Moldova and Ukraine," is the first such interdisciplinary programme in the region. It is implemented by the YSU Centre for European Studies through an EIDHR grant which amounts to €1,276,000.

<http://www.regionalmaster.net/>
<http://ces.am/>

Agricultural Census

In 2012 Armenia will hold its first Agricultural Census, with data collected on land, livestock, equipment, human and financial resources management, and other factors. To inform the public about the census and its planning, a seminar for regional statistic agencies was organised with the support of an EU Twinning Project on 23-24 September in the village of Chkalovka in Gegharkunik marz.

Thomas Bea, the Resident Twinning Advisor, Nver Poghosyan, the Governor of Gegharkunik marz, and Stepan Mnatsakanyan, the Head of the National Statistical Service of the Republic of Armenia (NSSRA), attended the seminar. The Chief Advisor at Statistics Sweden, Rolf Slander, and an expert from the US Department of Agriculture, Michael Steiner, were also invited and gave presentations on international census experience and EU legislation.

The EU Twinning Project "Forwarding Armenian Statistics Through Twinning" is a two-year project with a total budget of €1 million. It is being implemented by NSSRA in cooperation with the Government of Denmark through Statistics Denmark.

Գյուղատնտեսական համատարած հաշվառում



2012 թվականին Հայաստանում կանցկացվի առաջին գյուղատնտեսական համատարած հաշվառումը (հողատարածքների, անասունների, սարքավորումների, մարդկային և ֆինանսական ռեսուրսների կառավարման և այլնի վերաբերյալ տվյալ-

ների հավաքագրում): Հաշվառման և դրա պահանջարկները մասին հանրությանը իրազեկելու նպատակով ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակներում Գեղարքունիքի մարզի Չկալովկա գյուղում սեպտեմբերի 23-24-ը անց է կացվել սեմինար՝ մարզային վիճակագրական գործակալությունների համար:

Սեմինարին մասնակցել են Թվինինգ ծրագրի մշտական խորհրդատու, Դանիայի վիճակագրական ծառայության ներկայացուցիչ Թոմաս Բի, ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանը, Հայաստանի ԱՎԾ նախագահ Ստեփան Մնացականյանը:

Սեմինարին իրավիճակ էին նաև Շվեդիայի վիճակագրական ծառայության գլխավոր խորհրդատու Ռոլֆ Սեյլանդերը և ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտի փորձագետ Մայքլ Ստայները, որոնք մասնակցներին ծանոթացրել են հաշվառման անցկացման միջազգային փորձին և ԵՄ օրենսդրությանը:

«Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» ծրագիրը երկու տարի տևողությամբ և 1 մլն եվրո ընդհանուր բյուջեով ԵՄ Թվինինգ ծրագրերից է: Այն իրականացվում է Հայաստանի ԱՎԾ-ի կողմից՝ Դանիայի կառավարության հետ համագործակցությամբ՝ Դանիայի վիճակագրական ծառայության միջոցով:

Step forward/Քայլ առաջ

Irind on the threshold of life

On 15 September in the village of Irind, school children presented the results of a 6-month project "On the Threshold of Life", part of the EU funded project "Support to Democratisation and Spread Management." The project was initiated by the "Information Support Centre for Local Self-government" NGO.

"In Irind there are lots of capable and clever children, but there are no possibilities to develop and practice these capabilities as cultural life stopped here long ago, despite the existence of a cultural club", commented the head of the centre, Arevik Harutyunyan. This civic initiative was aimed at giving knowledge and skills to children according to their abilities, so they could practice them and become more competitive.

Within the scope of the programme, children underwent training in singing, dancing, the English language and information technology. At the end of the 6-month activities, children prepared an event to present their accomplishments.

"Despite the short period, we learned a lot of things and I am sure that based on what we have already done we can now improve our computer skills and communicate with foreign people", said 17-year old Aghavni Harutyunyan who had participated in English-language and information technology classes.

Arevik Harutyunyan also mentioned that, although the programme was temporary, the centre would try to continue this initiative with the help of volunteers.

Իրինդը՝ «կյանքի շեմին»

Սեպտեմբերի 15-ին Իրինդ գյուղում դպրոցականները ներկայացրել են ԵՄ ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Աջակցություն կառավարման ժողովրդավարացմանը և ապակենտրոնացմանը» ծրագրի բաղկացուցիչ մաս կազմող վեցամսյա «Կյանքի շեմին» ծրագրի արդյունքները: Այն նախաձեռնել էր «Տեղական ինքնակառավարման զարգացման աջակցող տեղեկատվական կենտրոն» հասարակական կազմակերպությունը:

«Իրինդում ապրում են ընդունակ և խելացի երեխաներ, սակայն այստեղ չկան

այդ ընդունակությունները զարգացնելու և օգտագործելու հնարավորություններ, քանի որ մշակութային կյանքն Իրինդում վաղուց կանգ է առել, չնայած որ կա մշակութային կենտրոն» - մեկնաբանում է կենտրոնի տնօրեն Արևիկ Հարությունյանը: Այս քաղաքացիական նախաձեռնության նպատակն էր երեխաներին տալ գիտելիքներ և հմտություններ՝ ըստ նրանց կարողությունների, որպեսզի նրանք հետագայում կարողանան կիրառել դրանք և դառնալ ավելի մրցունակ:

Ծրագրի շրջանակներում երեխաները մասնակցել են երգի, պարի, անգլերենի, համակարգչի դասընթացների: Ծրագրի ավարտի կապակցությամբ երեխաները պատրաստել էին հանդես, որի ժամանակ ներկայացրել են վեց ամսվա ընթացքում ձեռք բերած իրենց հմտությունները:

«Չնայած կարճ ժամանակահատվածին՝ մենք շատ բան ենք սովորել և վստահ ենք՝ ձեռք բերված այս գիտելիքները հիմք կլինեն, որպեսզի բարելավենք մեր համակարգչային հմտություններն ու հաղորդակցվենք օտարերկրացիների հետ», - ասում է 17-ամյա Աղավնի Հարությունյանը, ով մասնակցել էին անգլերեն լեզվի և տեղեկատվական տեխնոլոգիաների դասընթացներին:

Արևիկ Հարությունյանը ավելացրել է նաև, որ չնայած ծրագիրն ավարտվել է, սակայն իրենք կփորձեն կամավորների միջոցով շարունակել իրենց նախաձեռնությունը:



Կրթություն մարդու իրավունքների և ժողովրդավարության ոլորտում



Սեպտեմբերի 14-ին ԵՊՀ-ում պաշտոնապես մեկնարկել է ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիքի ֆինանսական աջակցությամբ հիմնված «Մարդու իրավունքներ և ժողովրդավարություն» տարածաշրջանային մագիստրոսական դասընթացները՝ երկամյա միջգիտաճյուղային ծրագիրը:

Մագիստրոսական նոր կուրսի 22 ուսանողներից 12-ը Հայաստանից են, իսկ մնացած 11-ը՝ Սուդանից, Ռուսաստանից, Բելառուսից, Ռուսաստանից և Վրաստանից:

Անդրադառնալով այդ փաստին՝ ծրագրի պաշտոնական մեկնարկի օրը եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն Արթուր Դազիսյանը նշել է, որ դա համագործակցության վերջնական սահմանը չէ, և որ մոտակա ժամանակներում ծրագրում կընդգրկվեն ներկայացուցիչներ նաև այլ երկրներից, այդ թվում՝ հարևան Ադրբեջանից և Թուրքիայից:

Ներկայումս, ծրագրի շրջանակներում, ԵՊՀ-ն համագործակցում է Կիևի Տարաս Շևչենկոյի անվան ազգային, Բելառուսի

պետական, Սուդանի եվրոպական քաղաքական և տնտեսական հետազոտությունների համալսարանների հետ:

Միջգիտաճյուղային մոտեցումների կիրառումը ուսանողներին կտա մարդու իրավունքների և ժողովրդավարացման մասին մշակութային, պատմական, փիլիսոփայական, քաղաքական, իրավական, սոցիոլոգիական և տնտեսական կայուն պատկերացումներ, ինչպես նաև ամբողջական գիտելիքներ ԵՄ-ի, նրա կառույցների և վերջիններիս քաղաքականության մասին:

Երկամյա մագիստրոսական այս ծրագրի հիմնական առանձնահատկությունը կրթության և մշակույթի ոլորտներում մասնագետների փոխանակման հնարավորությունն է: Առաջին երկու կիսամյակի դասերը կանցկացվեն Հայաստանում, այնուհետև ուսանողները, իրենց ընտրությամբ, ուսումը կշարունակեն գործընկեր համալսարաններից որևէ մեկում:

Այն ուսանողները, ովքեր մագիստրոսական կուրսում սովորելու համար գրավոր և բանավոր քննական փուլեր են անցել, մեծ ակնկալիքներ ունեն:

«Նախևառաջ, այս ծրագիրն ինձ համար միջմշակութային հարադրակցություն է մշակելու, և ես ակնկալում եմ խոր մասնագիտացում ստանալ», - նշել է ուսանողուհիներից Հասմիկ Հարությունյանը:

Ուկրաինացի ուսանողուհի Անաստասիա Սիխայլովան ծրագրին մասնակցելը մեծ պատասխանատվություն է համարում:

«Մենք հույս ունենք ուսուցումից հետո վերադառնալ մեր երկրները և փոփոխություններ կատարել այնտեղ, ստեղծել նոր իրականություն, ինչ-որ կարևոր դեր խաղալ»:

Մագիստրոսական առաջին կուրսի ավագ Սյունե Հարությունյանը, ելույթ ունենալով ծրագրի մեկնարկի օրը, շեշտել է ներմասնագիտական դաշտի կարևորությունը Հայաստանում՝ թե՛ մարդու իրավունքների, թե՛ ժողովրդավարացման տեսանկյուններից: Նրա խոսքերով, ուսանողների և արդեն մի քանի ծանոթ դասախոսների միջև տիրող մթնոլորտը հաճելի է և պարտավորեցնող:

Ծրագրի պատշաճ իրականացումը կնպաստի նաև եվրաինտեգրման հարցում: Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Ռաուլ դե Լուցենբերգերն ընդգծել է, որ ԵՄ միշտ էլ հանդես է եկել որպես մարդու իրավունքների մեծ հովանավոր, և մագիստրոսական այս նոր ծրագիրը ևս մեկ քայլ է այս բնագավառում:

«Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում Հայաստանում, Բելառուսում, Սուդանում և Ռուսաստանում» տարածաշրջանային մագիստրոսական ծրագիրն առաջին անգամ միջգիտաճյուղային ծրագիրն է տարածաշրջանում: Այն իրականացնում է ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը՝ ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիքի միջոցով՝ 1 276 000 եվրո բյուջեով:

Events/Իրադարձություններ

From discussion to action

At the seventh Advisory Board Meeting of the EU Advisory Group (EUAG), which was held on 28 September in Yerevan, the EUAG presented its quarterly report and its planned activities for the remainder of the year.

"We have moved from general discussions to concrete deliberations on progress in a wide range of areas. Therefore, we are no longer designing but doing reforms", said the Head of the EU Delegation to Armenia, Raul de Luzenberger, in his speech.

Progress on the preparations for a Deep and Comprehensive Free Trade Agreement negotiations, as well as EU efforts in supporting good governance, mobility and other areas were mentioned in the context of the ongoing EU-Armenia Association Agreement negotiations.

Armenian Government and National Assembly officials, EU Member State Embassy and international organisation representatives participated in the meeting, which was co-chaired by Ambassador Raul de Luzenberger and the Secretary of the Armenian National Security Council Artur Baghdasaryan.



Քննարկումներից անցում գործողությունների

Սեպտեմբերի 28-ին Երևանում կայացած ԵՄ խորհրդատվական խմբի (ԽՍԽ) յոթերորդ նիստի ընթացքում ներկայացվել է ԽՍԽ-ի եռամսյակային հաշվետվությունը և մինչև տարեվերջ նախատեսված աշխատանքային ծրագիրը:

«Մենք արդեն ավարտել ենք ընդհանուր սկզբունքների վերաբերյալ քննարկումները և անցել ենք կոնկրետ քայլերի քննարկմանը մի շարք բնագավառներում, ինչը նշանակում է, որ այլևս ոչ թե մշակում ենք բարեփոխումների ծրագրեր, այլ իրականացնում դրանք», - իր խոսքում նշել է դեսպան Ռաուլ դե Լուցենբերգերը:

ԵՄ-Հայաստան համագործակցության շրջանակներում գրանցված հիմնական ձեռքբերումների շարքում նշվել են Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու բանակցային գործընթացի նախապատրաստման վերաբերյալ տարված աշխատանքները, ինչպես նաև ԵՄ ներդրումը ժողովրդավարության, շարժունակության և այլ ոլորտների բարեփոխումների հարցում:

ԵՄ պատվիրակության ղեկավար Ռաուլ դե Լուցենբերգերի և ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի համամախազահությամբ ընթացող նիստին ներկա էին Հայաստանի Կառավարության և Ազգային ժողովի պաշտոնյաներ, ԵՄ անդամ պետությունների դեսպանատների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

EU-Armenia cooperation tightens

On 20 September the 12th meeting of the EU-Armenia Cooperation Committee was held in Yerevan.

The delegation representing the EU was chaired by Mr. Gunnar Wiegand, the Director for Russia, Eastern Partnership, Central Asia Regional Cooperation and the OSCE at the European External Action Service. The Armenian delegation was headed by the Armenian Minister of Economy, Tigran Davtyan.

Both sides indicated there had been solid progress within the context of EU-Armenia Association Agreement negotiations. Participants discussed the implementation of preconditions set for the start of the EU-Armenia Deep and Comprehensive Free Trade Area (DCFTA) negotiations. The agenda included issues of mobility between Armenia and the EU, based on the adoption of negotiating directives by the European Commission for visa facilitation and readmission agreement negotiations. Human rights, the settlement of the Nagorno-Karabakh conflict, Armenia-Turkey relations and EU assistance projects were also discussed.



ԵՄ-Հայաստան համագործակցության եզրերը

Սեպտեմբերի 20-ին Երևանում կայացել է ԵՄ-Հայաստան Համագործակցության կոմիտեի 12-րդ նիստը:

Նիստին մասնակցելու նպատակով Հայաստան էր ժամանել ԵՄ արտաքին հարաբերությունների ծառայության Ռուսաստանի, Արևելյան գործընկերության, Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային համագործակցության և ԵՄԿԿ հարցերով տնօրեն Գունար Վիգանդը: Հայկական կողմից նիստի համամախազահ էր ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը:

Քննարկման հիմնական թեմաներից էր ԵՄ-Հայաստան Առցանց համաձայնագրի շուրջ բանակցությունների շրջանակներում գրանցված առաջխաղացումը և ՀՀ-ԵՄ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու բանակցությունների մեկնարկի համար նախանշված գլխավոր պայմանների ապահովման հարցը: Նիստի օրակարգում ներառված էր Հայաստանի և ԵՄ-ի միջև մարդկանց տեղաշարժի դյուրացումը՝ պայմանավորված եվրահամաձայնագրի կողմից մուտքի արտոնագրերի տրամադրման դյուրացման և կրկին ընդունելու, ճանաչելու (ռեադմիսիայի) վերաբերյալ բանակցային ուղղությունների նախագծի ընդունմամբ: Քննարկվել են նաև մարդու իրավունքների, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների, ԵՄ աջակցության ծրագրերին վերաբերող այլ հարցեր:

Protection of competition

A seminar on "Strengthening the Enforcement of Competition and State Aid Legislation in Armenia" took place in Yerevan on 27-28 September, organised by the EU Twinning project and the State Commission for the Protection of Economic Competition (SCPEC). The main objective of the seminar was to improve the competitive economic environment in Armenia. In this context, the head of SCPEC, Artak Shaboyan, underlined the importance of the judicial system, as the majority of decisions made by SCPEC were contested at the judicial level. Similar verdicts were discussed during the seminar, on which EU experts gave comments based on EU experience and legislation. According to Onno Simons, the head of the Political, Economic, Press and Information Section, the improvement of Armenia's economic competitiveness would be beneficial for both consumers and manufacturers. It would also foster innovation, raise quality and cut prices; however, it would need protection from the government and businessmen.

SCPEC representatives, Administrative Court judges and EU experts Kurt Stockmann and Jurate Soviene attended the seminar.



Մրցակցության պաշտպանություն

Երևանում սեպտեմբերի 27-ին և 28-ին անց է կացվել Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական համաձայնագրի (ՏՄՊՀ) և ԵՄ Թվիինգ ծրագրի կողմից կազմակերպված «Մրցակցային և պետական օժանդակություն օրենսդրության կիրառման հզորացմանը Հայաստանում» սեմինարը:

Սեմինարի հիմնական նպատակը Հայաստանում տնտեսական մրցակցային միջավայրի բարելավումն է: ՏՄՊՀ նախագահ Արտակ Շաբոյանը ընդգծել է դատական համակարգի աշխատանքների կարևորությունն այս գործում, քանի որ ՏՄՊՀ-ի որոշումների մեծ մասը բողոքարկվում է դատական կարգով: Դատական մամուլի մի քանի վճիռ քննարկվել է հենց սեմինարի ընթացքում, որոնց վերաբերյալ իրենց մեկնաբանություններն են արել ԵՄ փորձագետները՝ հիմնվելով Եվրոպական միության փորձի և օրենսդրության վրա: Հայաստանում ԵՄ պատվիրակության քաղաքական, տնտեսական, մամուլի և տեղեկատվության բաժնի ղեկավար Օնո Սիմոնսի խոսքերով՝ Հայաստանում մրցակցության ոլորտի կատարելագործումից կշահի և՛ սպառողը, և՛ արտադրողը, ինչպես նաև՝ կիսբանվեց նորարարության, ապրանքի որակի բարձրացման, զների իջեցման գործընթացները, սակայն այս ամենը պահանջում է պաշտպանություն թե՛ պետության թե՛ անհատ տնտեսավարողների կողմից:

Սեմինարին մասնակցում էին ՀՀ ՏՄՊՀ ներկայացուցիչներ, Վարչական և Վերաքննիչ դատարանների դատավորներ, ինչպես նաև ԵՄ փորձագետներ Կուրտ Շտոքմանը և Յուրաթե Սովյենեն:



Եվրապո- միության անդամ պետությունների ոստիկանական գերատեսչությունների և իրավապահ ծառայությունների միջև համագործակցության խթանման և բարելավման համար պատասխանատվություն կրող գործակալություն է:

Եվրոպական ոստիկանական գրասենյակի գաղափարն առաջին անգամ արծարծվել է 1991 թվականի հունիսին՝ Լյուքսեմբուրգում տեղակայված Եվրոպական խորհրդում: Գրասենյակի մասին հատուկ դրույթ է ընդգրկվել Մասստրիխտի պայմանագրում: Գրասենյակն իր աշխատանքները սկսել է 1994 թվականի հունվարին՝ «Եվրապոլ. թմրամիջոցների դեմ պայքարի միավոր» անվան ներքո (անգլերեն հավավումը՝ EDU): Եվրապոլի

Եվրապոլ (Եվրոպական ոստիկանական գրասենյակ)

հիմնադրման մասին կոնվենցիան ստորագրվել է 1995 թվականի հունիսին և ուժի մեջ մտել 1998թ. հոկտեմբերի 1-ից:


2009 թվականի դեկտեմբերի 1-ից՝ Լիսաբոնի պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո, Եվրոպոլի մասին դրույթներն անցել են Եվրոպական միության գործառույթյան մասին պայմանագրի «հովանու» ներքո (Գլուխ V - Ազատության, անվտանգության և արդարադատության տարածք): Ավելին՝ 2010 թվականի հունվարի 1-ից Եվրոպոլի մասին կոնվենցիային փոխարինելու է եկել խորհրդի հատուկ որոշումը: Եվրապոլի իրավասության ոլորտին է պատկանում ծանր հանցագործությունների և ահաբեկության դեմ պայքարը, սակայն, որպես այդպիսին, այս գործակալությունը համաեվրոպական

ոստիկանական կառույց չէ: Այն անդամ պետություններին ծառայող մի մեխանիզմ է, որի նպատակն է օգնել այդ պետություններին քրեական երևույթների դեմ պայքարում: Գործնականում Եվրապոլի աշխատանքը ազգային իշխանությունների միջև փոխանակվող տեղեկատվության հոսքին նպաստելն է և այդ իշխանություններին հանցագործությունների վերաբերյալ վերլուծություններ տրամադրելը: Եվրապոլը մասնակցում է համատեղ քննչական այն խմբերի աշխատանքներին, որոնցում ներգրավված են լինում անդամ պետությունների տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ և տրամադրում է այնպիսի տեղեկատվություն, որն այդ խմբերին անհրաժեշտ է տեղում աշխատանքներ իրականացնելու համար:



Ամենահին հսկան

Լատվիայում է գտնվում Եվրոպայի ամենահին և խոշոր փակ շուկաներից մեկը՝ Ռիգայի կենտրոնական շուկան: Այն բաղկացած է հինգ տաղավարներից (մսեղենի, ձկնեղենի, բանջարեղենի, կաթնամթերքի և գաստրոնոմիայի), որոնք առանձնահամուր են իրենց ինքնատիպ կառուցվածքով և հսկայական ծավալներով. տանիքի բարձրությունը 20,5 մետր է, լայնքը՝ 35 մետր: Շուկայի ընդհանուր տարածքը 5,7 հա է, իսկ ծածկապատ մակերեսը՝ 1,6 հա, որտեղ տեղակայված են ավելի քան 3000 առևտրային կետեր:



Փակ շուկայի մետաղական տանիքներն ի սկզբանե կառուցվել են ոչ թե Ռիգայում այլ Վայնյոդում՝ որպես դիրիժաբլների անգարներ, բայց 1920-ականներին տեղափոխվել են մայրաքաղաք՝ շուկայի կարիքները հոգալու համար:

Շուկայի շինարարությունը սկսվել է 1924 թ.-ին և ավարտին հասցվել 1930 թ.-ին: Այդ հսկայական շենքերի կառուցման համար օգտագործվել է 6 մլն աղյուս, 2460 տոննա երկաթ, 60 հազար տակառ ցեմենտ:

Բացի հիմնական շինությունից, տաղավարների տակ կառուցվել են նաև նկուղներ, որոնք ծառայում են որպես պահեստներ: Դրանք ունեն գլխավոր և կողային անցումներ, որոնք միմյանց են միացնում բոլոր հինգ տաղավարները: Ստորգետնյա շուկայի տարածքը 2 հա է, իսկ թունելների ընդհանուր երկարությունը՝ 337 մետր:

Այսօր Ռիգայի կենտրոնական շուկա օրական այցելում է 80-100 հազար մարդ: Եվ եթե ձեզ էլ բախտ վիճակվի այնտեղ լինել, չիրաժարվեք Ռիգայի շուկային բնորոշ, իսկ օտարերկրացիների համար էկզոտիկ համարվող այնպիսի ապրանքներից, ինչպիսիք են՝ կանեփով յուղը, խոզի քիթը, բեյլաշը, լցնովի կվարը:

1998 թվականին հին Ռիգայի հետ մեկ ամբողջականություն կազմող շուկայի տարածքն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկի մեջ:

Լրիվ անվանումը՝ Լատվիայի Հանրապետություն: **Մայրաքաղաքը՝** Ռիգա: **Պետական կառուցվածքը՝** Պառլամենտական հանրապետություն: **Տարածքը՝** 65 000 քառ. կմ: **Բնակչությունը՝** 2,3 մլն: **Պետական լեզուն՝** լատիշերեն: **ԵՄ անդամակցությունը՝** 2004 թ.-ից:

Լիտվայի ոսկին

Լիտվայում գրեթե ամեն քայլափոխի կհանդիպեք «սաթ» անվանումով հուշանվերներ, թխվածքաբլիթներ, զարեջուր և նույնիսկ հյուրանոցների անուններ: Եվ դա զարմանալի չէ, քանի որ սաթը Լիտվայի ամենաճանաչելի խորհրդանիշերից մեկն է և իրավամբ համարվում է Լիտվայի ոսկին: Չնայած սաթի արդյունաբերությունն այստեղ դադարեցվել է դեռևս 19-րդ դարի վերջում, սակայն դրա կիրառումը լիտվական արվեստում շարունակում է ժամանակակից մնալ: Այստեղ սաթից պատրաստվում է ամեն ինչ՝ զարդեր, զարդատուփեր, բաժակներ, շախմատի քարեր, հեթանոսական աստվածների կերպարներ, կամ ուղղակի քարեր, որոնց մեջ միջատներ են ամփոփված:



Լիտվայում գործող սաթի բազմաթիվ թանգարաններից ամենանշանավորը գտնվում է Պալանգայում, որտեղ ներկայացված է սաթի ավելի քան քսան տարատեսակ: Թանգարանի 15 սրահներում ներկայացված են ավելի քան 4500 նմուշներ՝ սաթե քարեր և իրեր: Առավել ուշագրավ են հնագիտական գտածոները և իրենց մեջ միջատներ ու բույսեր ամփոփած քարերը:

Թանգարանում կարելի է հետևել նաև սաթից զարդերի ստեղծման ընթացքին՝ հունքի մշակումից մինչև վերջին մասնիկի ձևավորումը:

Սաթի այս թանգարանը միակն է աշխարհում, որտեղ ներկայացված է նման հարուստ տեսականի, այստեղ կարելի է տեսնել աշխարհի տարբեր ծայրերից բերված սաթի նմուշներ: Այստեղ է գտնվում նաև աշխարհի խոշորագույն սաթերից մեկը՝ «սաթե արևը» (հայտնի է նաև որպես «արևային քար»), որը կշռում է ավելի քան 3,5 կգ:

Լրիվ անվանումը՝ Լիտվայի Հանրապետություն: **Մայրաքաղաքը՝** Վիլնյուս: **Պետական կառուցվածքը՝** կիսանախագահական հանրապետություն: **Տարածքը՝** 65 000 քառ. կմ: **Բնակչությունը՝** 3,3 մլն: **Պետական լեզուն՝** լիտվերեն: **ԵՄ անդամակցությունը՝** 2004 թ.-ից:

ԲԱՌԱՐԱՆ

- **ԵՄ Քաղաքական և անվտանգության կոմիտե (ՔԱԿ, PSC՝ անգլերեն տարբերակով, COPS՝ ֆրանսերեն տարբերակով)** ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության բնագավառի մշտական մարմինն է՝ համաձայն Եվրոպական միության մասին Պայմանագրի 25-րդ հոդվածի: Այն կազմված է անդամ պետությունների նախարարությունների քաղաքական տնօրեններից: Կոմիտեի առաջադրանքներից են՝ հետևել միջազգային դրությանը ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության բնագավառում, վերահսկել խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարումը:
- **ԵՄ անվտանգության և պաշտպանության եվրոպական համընդհանուր քաղաքականությունը (ԱՊԵՅԲ/ESDP)** իր մեջ ներառում է պաշտպանության ընդհանուր քաղաքականության ձևավորումը, որը ժամանակի ընթացքում կարող է բերել համընդհանուր պաշտպանությանը: ESDP-ն Միությանը թույլ է տալիս զարգացնել իր քաղաքացիական և ռազմական ներուժը՝ ճգնաժամը կառավարելու և միջազգային մակարդակով ընդհարումները կանխելու համար, այդպիսով աջակցելով խաղաղության և միջազգային անվտանգության պահպանմանը՝ համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության: ESDP-ն չի ծառայում Եվրոպական բանակի ստեղծմանը, այլ զարգանում է ՆԱՏՕ-ի հետ համագործակցության և համակարգվող եղանակով:

For more information please contact the Delegation of the European Union to Armenia
21 Frik str, Yerevan, Armenia Entrance from Proshyan str.
Tel.: (+374 10) 54 64 94, (+374 10) 54 64 95; E-mail: Delegation-Armenia@ec.europa.eu; http://ec.europa.eu/delegations/armenia; http://eunewsletter.am
The Newsletter is prepared by SHARM Holding

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Եվրոպական միության պատվիրակությանը Հայաստանում
Հայաստան, Երևան, Ֆրիկի փողոց, 21, (մուտքը Պռոշյան փողոցից)
Հեռ.՝ (+374 10) 54 64 94, (+374 10) 54 64 95, էլ. փոստ՝ Delegation-Armenia@ec.europa.eu, http://ec.europa.eu/delegations/armenia; http://eunewsletter.am
Հաղորդագիրը պատրաստել է ՇԱՐՄ Հոլդինգը